ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 63-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է***՝

Տալ համաձայնություն

1. Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի՝ ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ գործառնական դասակարգման 11 բաժնի, 01 խմբի, 02 դասի 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից կատարել հատկացում ֆոնդային բյուջե՝ 2 920 000 (երկու միլիոն ինները հարյուր քսան հազար) ՀՀ դրամ,
2. Արենի համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի ֆոնդային մասում ավելացված 2 920 000 ՀՀ դրամը ուղղել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՁԱՆԻԿ _____

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ _____

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ _____

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ _____

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**